# ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N** *ԲԱՀ-ԳՀԾՁԲ-19/2-1*

ք. Երևան «23» մարտի 2019 թ.

Բիզնես Արմենիա հիմնադրամը, (այսուհետ՝ հիմնադրամ), ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Դավիթ Փափազյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Պետրոսյանի, որը գործում է «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 54165000 (հիսունչորս միլիոն հարյուր վաթսունհինգ հազար ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Բիզնես Արմենիա Հիմնադրամ | «Դասո Պրինտ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Նորաշեն թաղ. 29, 122 տարածք |
| Հ/հ՝ 1930040359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | Հ/հ՝ 2500010693440100 «Արմսվիսբանկ » ՓԲԸ |
| ՀՎՀՀ՝ 02634631 | ՀՎՀՀ 00022766 |
| _____Դ. Փափազյան | _____Դ. Պետրոսյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

Հավելված N 1
«28» մարտի 2019 թ. կնքված
ԲԱՀ-ԳՀԾՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 79811100 /50 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 300000 | 15 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 2 | 79821190 /515 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 6000000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 3 | 79821190 /507 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 4800000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 4 | 79821190 /514 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 1800000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 5 | 79821190 /524 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 900000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 6 | 79821190 /523 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 700000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 9 | 79821190 /508 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 800000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 10 | 79821190 /516 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 700000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 11 | 79821190 /518 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 500000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 12 | 79821190 /510 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 8000000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 13 | 79821190 /509 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 6400000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 16 | 79821190 /526 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 1400000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 18 | 79821190 /513 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 9000000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 19 | 79821190 /522 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 3800000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 20 | 79821190 /525 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 3200000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 21 | 79821190 /519 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 1860000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | օրացույցային օրվա ընթացքում |
| 23 | 79811100 /507 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 500000 | 200 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 28 | 79811100 /512 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 660000 | 3000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 32 | 79811100 /520 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 60000 | 1000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 33 | 79811100 /517 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 37500 | 1500 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 34 | 79811100 /518 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 22500 | 1500 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 35 | 79811100 /519 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 600000 | 500 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 36 | 79811100 /666 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 150000 | 1000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 37 | 79811100 /516 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 250000 | 1000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 38 | 79811100 /509 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 500000 | 2000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | օրացույցային օրվա ընթացքում |
| 39 | 79821200 /502 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 750000 | 5000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |
| 40 | 79821200 /503 | Տես՝ Աղյուսակ 1 | Հատ | 475000 | 5000 | ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | 2019 թվականի ընթացքում, պատվիրատուի կողմից պատվերը տալուց 10 օրացույցային օրվա ընթացքում |

*** Պայմանագիրը կկնքվի "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

# Աղյուսակ 1

| Չափաբաժնի համար | ԱՆՎԱՆՈՒՄ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ<br>Տպագրության որակը՝ **թվային, օֆսեթ, լազերային** | ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | թվային տպագրության ծառայություններ /բաներ/ | Չափսը՝ 2*0,8 m, տպագրության կետայնությունը՝ 1440 dpi ; **4+4**<br> | 15 հատ |
| 2 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ /բրոշյուր1-1/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 12-36, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ:ֆայլերի քանակը մինչև 40, պատվերի նվազագույն քանակ 1-51 | 2000 |
| 3 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ /բրոշյուր 1-2/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 12-36, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ:ֆայլերի քանակը մինչև 40, պատվերի նվազագույն քանակ 51-200 | 2000 |
| 4 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ /բրոշյուր 1-3/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 12-36, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ:ֆայլերի քանակը մինչև 40, պատվերի նվազագույն քանակ 201-500 | 2000 |
| 5 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ /բրոշյուր 1-4/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 12-36, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ:ֆայլերի քանակը մինչև 40, պատվերի նվազագույն քանակ 501-1000 | 2000 |
| 6 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ /բրոշյուր 1-5/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 12-36, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ:ֆայլերի քանակը մինչև 40, պատվերի նվազագույն քանակ 1001-2000 | 2000 |
| 9 | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-3/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 4-8, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., պատվերի նվազագույն քանակ 201-500 | 2000 |

| | | | |
|---|---|---|---|
| **10** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-4/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 4-8, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., պատվերի նվազագույն քանակ 501-1000 | 2000 |
| **11** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-5/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 4-8, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., պատվերի նվազագույն քանակ 1001-2000 | 2000 |
| **12** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-1/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. Կավճ, պատվերի նվազագույն քանակ 1-50 | 2000 |
| **13** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-2/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. Կավճ, պատվերի նվազագույն քանակ 51-200 | 2000 |
| **16** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-5/ | Ֆորմատը՝ **21x21,** երկկողմանի գունավոր լազերային տպագրություն, ասեղային կարվածքով, **4+4,** կազմը՝ 200-250գր. կավճ., անփայլ թավշյա մակաշերտմամբ, էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. Կավճ, պատվերի նվազագույն քանակ 1001-2000 | 2000 |
| **18** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-2/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., պատվերի նվազագույն քանակ 51-200 | 2000 |
| **19** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-3/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., 201-500 | 2000 |
| **20** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-4/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., 501-1000 | 2000 |
| **21** | ձեռնարկների — բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-5/ | Ֆորմատը՝**A4**, **4+4**, երկկողմանի գունավոր տպագրություն, թելակար: Կազմը՝ 200-250գր. Կավճ. անփայլ, թավշյա մակաշերտմամբ: Էջերի քանակը՝ 36-60, միջուկը՝ անփայլ 120-150գր. կավճ., պատվերի նվազագույն քանակ 1001-2000 | 2000 |

| | | | |
|---|---|---|---|
| 23 | թվային տպագրության ծառայություններ /օրագիր | Ֆորմատը՝ **A5**, կարվածքը՝ թելակար, կաշվե կարմիր կազմով, լոգոտիպի և հավելյալ բրենդային նշանների առկայությամբ: Թուղթ՝ **80 գր..** 4+1: Էջերի քանակը՝ ըստ համապասխան տարվա օրակարգի: Յուրաքանչյուր աշխատանքային օր՝ (երկուշաբթի-ուրբաթ) նոր էջից, յուրաքանչյուր շաբաթվա հանգստյան օրերը՝ (շաբաթ, կիրակի) նույն էջի վրա: | 200 հատ |
| **28** | թվային տպագրության ծառայություններ /թղթե տոպրակ/ | Գույնը՝ սպիտակ, 4+0, չափսը՝ **260*350*120մմ**, շտանցով, 210գր., անփայլ, կապիչանման բռնակներով, բրենդային լոգոտիպով և հավելյալ բրենդային նշանների առկայությամբ: | 3000 հատ |

| | | | |
|---|---|---|---|
| | |  | |
| 32 | թվային տպագրության ծառայություններ /պիտակներ ինքնասոսնձվող 1 | Չափը՝ **15x5.5սմ,**<br>• Փակցնելու տեսակը: փակցնել մեքենաներին և սարքավորումներին<br>• Բարձր դիմացկունությամբ՝ ջրի, անձրևի նկատմամբ<br>• Պիտակ՝ հետնամասում կպչուն սոսնձով (steaker), տարատեսակ մակերևույթներին փակցվող , մասնավորապես՝ մետաղին, հեռացվող, individually die-cut vinyl | 1000 հատ |
| 33 | թվային տպագրության ծառայություններ /պիտակներ ինքնասոսնձվող 2 | Չափը՝ **10x3սմ,** • Փակցնելու տեսակը: փակցնել մեքենաներին և սարքավորումներին<br>• Բարձր դիմացկունությամբ՝ ջրի, անձրևի նկատմամբ<br>• Պիտակ՝ հետնամասում կպչուն սոսնձով (steaker), տարատեսակ մակերևույթներին փակցվող , մասնավորապես՝ մետաղին, հեռացվող, individually die-cut vinyl | 1500հատ |
| 34 | թվային տպագրության ծառայություններ/պիտակներ ինքնասոսնձվող 3 | Չափը՝ **5x1.5սմ**<br>• Փակցնելու տեսակը: փակցնել մեքենաներին և սարքավորումներին<br>• Բարձր դիմացկունությամբ՝ ջրի, անձրևի նկատմամբ<br>• Պիտակ՝ հետնամասում կպչուն սոսնձով (steaker), տարատեսակ մակերևույթներին փակցվող , մասնավորապես՝ մետաղին, հեռացվող, individually die-cut vinyl | 1500 հատ |
| 35 | թվային տպագրության ծառայություններ/օրացույց/ | **4+4; եռամսյակային, օրերի նշման շարժական վանդակով՝ պլաստիկ ժապավենի վրա, կազմը՝ 350գր, միջուկը՝ 80գր., 12 էջ՝ (յուրաքանչյուր էջը 1 ամսի համար նախատեսված)** | 500 հատ |

| | | | |
|---|---|---|---|
| 36 | թվային տպագրության ծառայություններ/բեյջ/ | Չափսը՝ A6, պլաստիկ, կապիչանման ժապավենով ամրացվող<br>  | 1000 հատ |
| 37 | թվային տպագրության ծառայություններ/սկավառակների վրա/ թվային տպագրության ծառայություններ/գրիչներ/ | DVD սկավառակների տպագրություն լոգոտիպով և բրենդային նշաններով (սկավառակները տրամադրվում են մասնակցի կողմից) | 1000 հատ |
| 38 | թվային տպագրության ծառայություններ/գրիչներ/ | Պլաստիկ, գունավոր՝(բրենդային) լոգոյի և հավելյալ բրենդային նշանների առկայությամբ՝ 4 գույնով<br>գրիչի թանաքը՝ կապույտ, (գինը ներկայացնելիս ներառել նաև գրիչի արժեքը):<br> | 2000 հատ |
| 39 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման | A4 ֆորմատ , երկկողմանի գունավոր տպագրություն, թուղթը ՝250 գր., փայլուն , միաձալ կամ երկձալ : պատվերի նվազագույն քանակ մինչև 300 | 5000 հատ |

| | | | |
|---|---|---|---|
| | ծառայություն/ բուկլետ1 | | |
| **40** | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/ բուկլետ2 | A4 ֆորմատ , երկկողմանի գունավոր տպագրություն, թուղթը `250 գր., փայլուն , միաձալ կամ երկձալ : պատվերի նվազագույն քանակ 300-1000 | 5000 հատ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Բիզնես Արմենիա Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 1930040359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02634631

_____ Դ. Փափազյան

/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Դասո Պրինտ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նորաշեն թաղ. 29, 122 տարածք

Հ/հ՝ 2500010693440100 «Արմսվիսբանկ » ՓԲԸ

ՀՎՀՀ 00022766

----------Դ. Պետրոսյան

/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
«28» մարտի 2019 թ. կնքված
ԲԱՀ-ԳՀԾՁԲ-19/2-1ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79811100 /50 | Թվային տպագրության ծառայություններ/բաներ/ | | | | | | | | | | | | | |
| 2 | 79821190 /515 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր1-1/ | | | | | | | | | | | | | |
| 3 | 79821190 /507 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 1-2/ | | | | | | | | | | | | | |
| 4 | 79821190 /514 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 1-3/ | | | | | | | | | | | | | |
| 5 | 79821190 /524 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 1-4/ | | | | | | | | | | | | | |
| 6 | 79821190 /523 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 1-5/ | | | | | | | | | | | | | |
| 9 | 79821190 /508 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-3/ | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 79821190 /516 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-4/ | | | | | | | | | | | | | |
| 11 | 79821190 /518 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 2-5/ | | | | | | | | | | | | | |
| 12 | 79821190 /510 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-1/ | | | | | | | | | | | | | |
| 13 | 79821190 /509 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-2/ | | | | | | | | | | | | | |
| 16 | 79821190 /526 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 3-5/ | | | | | | | | | | | | | |
| 18 | 79821190 /513 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-2/ | | | | | | | | | | | | | |
| 19 | 79821190 /522 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-3/ | | | | | | | | | | | | | |
| 20 | 79821190 /525 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-4/ | | | | | | | | | | | | | |
| 21 | 79821190 /519 | ձեռնարկների – բրոշյուրների տպագրման ծառայություններ/բրոշյուր 4-5/ | | | | | | | | | | | | | |
| 23 | 79811100 /507 | թվային տպագրության ծառայություններ/օրագիր | | | | | | | | | | | | | |
| 28 | 79811100 /512 | թվային տպագրության ծառայություններ/թղթե տոպրակ/ | | | | | | | | | | | | | |
| 32 | 79811100 /520 | թվային տպագրության ծառայություններ/պիտակներ ինքնասոսնձվող 1 | | | | | | | | | | | | | |
| 33 | 79811100 /517 | թվային տպագրության ծառայություններ/պիտակներ ինքնասոսնձվող 2 | | | | | | | | | | | | | |
| 34 | 79811100 /518 | թվային տպագրության ծառայություններ/պիտակներ ինքնասոսնձվող 3 | | | | | | | | | | | | | |
| 35 | 79811100 /519 | թվային տպագրության ծառայություններ/օրացույց/ | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | 79811100 /666 | թվային տպագրության ծառայություններ/բեյջ/ | | | | | | | | | | | | | |
| 37 | 79811100 /516 | թվային տպագրության ծառայություններ/սկավառակների վրա/ | | | | | | | | | | | | | |
| 38 | 79811100 /509 | թվային տպագրության ծառայություններ/գրիչներ/ | | | | | | | | | | | | | |
| 39 | 79821200 /502 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/բուկլետ1 | | | | | | | | | | | | | |
| 40 | 79821200 /503 | այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/բուկլետ2 | | | | | | | | | | | | | |

**Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Բիզնես Արմենիա Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 1930040359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02634631

_____Հ. Փարսադյան

/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Դասո Պրինտ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նորաշեն թաղ. 29, 122 տարածք

Հ/հ՝ 2500010693440100 «Արմսվիսբանկ » ՓԲԸ

ՀՎՀՀ 00022766

----------Դ. Պետրոսյան

/ստորագրություն/Կ.Տ

*Հավելված 3*
*«  »  մարտի 2019 թ. կնքված*
*ԲԱՀ-ԳՀԾՁԲ-19/2-1ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«Դասո Պրինտ» ՍՊԸ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Նորաշեն թաղ. 29, 122 տարածք
Հ/հ՝ 2500010693440100 «Արմսվիսբանկ » ՓԲԸ
ՀՎՀՀ 00022766

Պատվիրատու
Բիզնես Արմենիա Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 1930040359220700
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02634631

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  »«  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«  »  մարտի  2019 թ. կնքված*
*ԲԱՀ-ԳՀԾՁԲ-19/2-1ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Բիզնես Արմենիահիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019 թ. _____ -ին կնքված N _ ____ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն